ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/06

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Հովհաննիսյանի (լիազորագիր, տրված՝ 16.01.2020թ.)

Մ. Շախնազարյանի (լիազորագիր, տրված՝ 16.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2019թ. թիվ 26/26-1/21518-2019 գրությամբ «Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.12.2019թ. թիվ ՊՆ/02/2961-2019 գրության հիման վրա, 25.12.2019թ. թիվ 26/26-1/21518-

2019 գրությամբ նախաձեռնել է Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերություններին (հետայսու նաև՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Սապսան Գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սապսան Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ ապրանքների գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ-20-7/5» ծածկագրով բաց մրցույթին «ՊԿ Ակոմպ» ՍՊԸ-ի հետ:

16.12.2019թ. Ընկերությունը ստացել է անստորագիր նամակ, որում գրված էր, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում կան անհամապատասխանություններ և անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Ծանուցումը պետք է լիներ ստորագրված: Միաժամանակ նամակին կցված տեքստում գրված է եղել «Խնդրում ենք չպատասխանել այս նամակին»:

Չցանկանալով կազմակերպությունների համար ստեղծել լրացուցիչ խնդիրներ 2019թ. դեկտեմբերի 17-ին համաձայն վերոգրյալ իրավական կարգավորման համապատասխան կետի ստացված նամակին Կոնսորցիումը պատասխան է ներկայացրել անստորագիր նամակին:

«Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/06 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ն ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.12.2019թ. թիվ ՊՆ/02/2961-2019 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/5» ծածկագրով գնման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացել «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ն: Ընկերությունը վերոնշյալ ընթացակարգին մասնակցել է համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագրով «ՊԿ Ակոմպ» ՍՊԸ-ի հետ: Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանութ-յուններ, մասնավորապես՝ հայտով ներկայացված կոնսորցիումի պայմանագրով հստակ չէ, թե որ գործընկերն է ապահովելու հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշը, ինչպես նաև ներկայացված հայտը հաստատված է երրորդ անձի կողմից, որի վերաբերյալ բացակայում է կոնսորցիումի անդամի լիազորագիրը: Ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և սահմանված կարգով ծանուցել մասնակցին վերոնշյալ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Սապսան Գրուպ» ՍՊԸ /կոնսորցիում «ՊԿ Ակոմպ» ՍՊԸ հետ/ հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/06 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/06 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/06 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ-20-7/5» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2019թ. թիվ 26/26-1/21518-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.12.2019թ. թիվ ՊՆ/02/2961-2019 գրությունը և կից փաստաթղթերը, «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է

հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ-20-7/5» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին. մասնավորապես՝ կոնսորցիումի ներկայացրած հայտը հաստատված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ Ալբերտ Կարապետյանի կողմից, որը հանդիսանում է լիազորված անձ: Քանի որ «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցել է Ընթացակարգի կոնսորցիումով «ՊԿ Ակոմպ» ՍՊԸ-ի հետ, ուստի ներկայացված հայտում բացակայում է «ՊԿ Ակոմպ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված լիազորագիրը Ալբերտ Կարապետյանին՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ, ինչպես նաև հայտով ներկայացված Կոնսորցիումի պայմանագրով հստակ չէ, թե որ գործընկերն է ապահովում հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է Կոնսորցիումին՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում Կոնսորցիումը չի շտկել անհամապատասխանությունները և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կոնսորցիումի հայտը մերժել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

«Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտով ներկայացվել է նույն ընկերությունների միջև 09.12.2019թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը:

Պայմանագրի 3.2-րդ կետով սահմանվել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ-20-7/5» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հետ կապված երրորդ անձանց հետ հարաբերություններում, այդ թվում նաև հայտը ներկայացնելը և այլ գործողություններն (գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցություններին մասնակցելու, փաստաթղթեր ներկայացնելու, պայմանագիրը ստորագրելու, հանձնաժողովի գործողությունները կամ որոշումները բողոքարկելու և այլն) իրականացվում են «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից՝ ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի:

Նույն պայմանագրով նախատեսվել են նաև յուրաքանչյուր անդամի կողմից ներդրվող որակավորման պահանջները: Միևնույն ժամանակ չի նշվել թե կոնսորցիումի անդամներից ում վրա է դրվում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշն ապահովելու պարտականությունը:

Կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը ստորագրվել է լիազորված անձ Ա. Կարապետյանի կողմից:

Կոնսորցիումի հայտին կից ներկայացվել է լիազորագիր, որի համաձայն «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենը լիազորել է Ա. Կարապետյանին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ-20-7/5» ծածկագրով ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում ներառվող փաստաթղթերն իր փոխարեն հաստատել էլեկտրոնային ստորագրությամբ:

Այսպիսով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1029-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված չէ, **որ գործերը վարում են համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակիցներ** կամ բոլորը՝ համատեղ:

Գործերը համատեղ վարելու դեպքում յուրաքանչյուր գործարք կնքելու համար պահանջվում է բոլոր մասնակիցների համաձայնությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է երրորդ անձանց հետ հարաբերություններում բոլոր մասնակիցների անունից գործարք կնքելու համար մասնակցի լիազորությունը հավաստվում է մնացած մասնակիցների կողմից նրան տրված լիազորագրով կամ **համատեղ գործունեության պայմանագրով:**

Կարգի 32-րդ կետի 7-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի **յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ**

պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին,

գ. հրավերով սահմանվում է, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը,

դ. **եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում**, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են **այդ մասնակցին:**

Այսպիսով՝ Կոնսորցիումի պայմանագով նախատեսվել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու կապակցությամբ երրորդ անձանց հետ գործերը վարում, այդ թվում նաև՝ հայտը ներկայացնում է «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ա. Խաչատարյանի: Արձանագրում եմ, որ «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Խաչատարյանի կողմից տրվել է լիազորագիր Ա. Կարապետյանին, որպեսզի վերջինս «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ-20-7/5» ծածկագրով ծածկագրով բաց մրցույթում «Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը ստորագրի «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենի փոխարեն:

Ուսումնասիրելով վերոհիշյալ լիազորագիրը, գտնում եմ, որ այն պետք է դիտարկել որպես «Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերությունների կողմից տրված, քանի համաձայն կոնսորցիումի պայմանագրի՝ Ընթացակարգի մասնակցության հետ կապված գործերը վարում է «Սապսան Գրուպ» ՍՊԸ-ն, որն էլ իրավասու էր կոնսորցիումի նաև մյուս անդամի անունից տալու համապատասխան լիազորագիրը:

Ինչ վերաբերում է կոնսորցիումի պայմանագրով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի ապահովման մասով կողմերի պարտականության նախատեսված չլինելուն, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1027-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակցի ավանդ է համարվում այն ամենը, ինչ նա ներդնում է ընդհանուր գործում՝ ներառյալ դրամը, այլ գույքը, մասնագիտական և այլ գիտելիքները,

ունակություններն ու հմտությունները, ինչպես նաև գործարար համբավը և գործարար կապերը:

Ընդ որում՝ մասնակիցների ավանդները, ըստ դրանց արժեքի, ենթադրվում են հավասար, եթե այլ բան չի բխում համատեղ գործունեության պայմանագրից կամ փաստացի հանգամանքներից: Մասնակիցների ավանդների դրամական գնահատումը կատարվում է նրանց համաձայնությամբ:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կոնսորիցումի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Տվյալ դեպքում հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ նման պայմաններում քանի որ Կոնսորիցումի պայմանագրով չի սահմանվել, թե որ մասնակիցն է ներդնում «Ֆինանսնական միջոցներ» որակավորման չափանիշը, ուստի ենթադրվում է, որ այն պետք է դիտարկվեր որպես կոնսորցիումի երկու անդամի ստանձնած պարտականություն՝ հավասար չափով:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերությունները «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ-20-7/5» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չեն տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2019թ. թիվ 26/26-1/21518-2019 գրությամբ «Սապսան Գրուպ» և «ՊԿ Ակոմպ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**